

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ՄԻ ՏԵՍԱԿԻ
ՄԱՍԻՆ

Միրիջանյան Դ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, Հայաստան)
dianamirijanyan@rambler.ru

Բանալի բառեր՝ կղմինդր, ճարտարապետություն, մշակույթ,
հնագիտություն:

V-VII դդ. եկեղեցիների և մատուռների կառուցման և
վերանորոգման աշխատանքների լայն ծավալները զարկ տվեցին
կղմինդրի արտադրությանը: Այն վաղ միջնադարյան
խեցեգործական արտադրանքի մեջ առանձին խումբ է կազմում:

Կղմինդրի ուսումնասիրությունը կարևոր աղբյուր է
արտադրության, առևտրի կազմակերպման ու վերահսկման,
խեցեգործական արհեստանոցների գործունեության, դրանցում
պատրաստվող բազմաբնույթ արտադրանքի, աշխատուժի
վերաբերյալ:

Կարևոր նյութ է նաև հուշարձանների թվագրության համար:

Հայաստանում կղմինդրը հայտնի է դեռևս հելլենիստական
շրջանից, որի օգտագործումը հանդիսանում է շինարարական բարձր
տեխնիկայի և քաղաքային մշակույթի վկայություն: Մեզ հայտնի
ամենահին կղմինդրները հայտնաբերվել են Արտաշատի
պեղումներից: Դրանց զանգվածային բնույթը և պատրաստման
որակը վկայում են, որ կղմինդրի արտադրությունն անտիկ շրջանում
գտնվել է զարգացման բարձր մակարդակի վրա: Հավանական է, որ
կղմինդրի արտադրությունը Հայաստան և հարևան երկրներ անցել է
Փոքր Ասիայից: Այդ մասին կարող է վկայել նաև անվանումը՝
«կղմինդր», որը փոխ առնված է հունարեն «կերամիս» բառից:
Միջնադարում ևս ավանդաբար շարունակվում է հելլենիստական
տափակ (սուլեն) և կիսակլոր (կալիպտեր) կղմինդրների
օգտագործումը: Կղմինդրաձածկ տանիքի կառուցվածքը

հասկանալու առումով կարևոր նյութ է տալիս VII դ. ի վեր, գրեթե անփոփոխ պահպանված Աշտարակի Կարմրավոր եկեղեցու գմբեթը:

Դեռևս անտիկ շրջանում կղմինդրի արտադրությունը գտնվել է բարձր խավի վերահսկողության ներքո: Վաղ միջնադարում այն կենտրոնացած էր մեծ բնակավայրերում գտնվող արհեստանոցներում: Հայաստանում կղմինդր արտադրվել է Դվինում, Վաղարշապատում, Աղցքում, ինչը վկայում են հայտնաբերված խոտանները և որոշ առանձնահատկություններ (գրեր, պատկերներ):

Վաղ միջնադարում տափակ կղմինդրը ենթարկվում է որոշակի փոփոխությունների և էականորեն տարբերվում անտիկ շրջանի սուլեններից: Փոփոխությունների ենթարկվում են նաև կիսակլոր կղմինդրները:

Այսպիսով, Հայաստանում կղմինդրածածկ տանիքը հելլենիստական մշակույթի արգասիք էր, որը քաղաքական ու հոգևոր նոր պայմաններում սկսեց կիրառվել մեծամասամբ եկեղեցիների ծածկերի համար: Հայաստանում քրիստոնեական կառույցները պահպանեցին քրիստոնյա ողջ աշխարհին բնորոշ կղմինդրածածկ տանիքը մինչև X դ., որից հետո այն փոխարինվեց ավելի դիմացկուն քարե սալերով: Կղմինդրածածկ տանիքներ հայտնվում են նաև ուշ միջնադարում, հատկապես Արցախի ճարտարապետությունում, իսկ Սյունիքում հիմնականում օգտագործվել են օժանդակ շինությունների ծածկերի համար: Հասարակական և տնտեսական շինությունները շարունակում էին կառուցել ավանդական հարթ տանիքներով կամ գլխատան սկզբունքով:

ABOUT A TYPE OF THE EARLY MEDIEVAL CONSTRUCTIONAL CERAMIC

Mirijanyan D. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)